

## Պաշտոնական ընդդիմախոսի կարծիք

### Սոնա Կամոյի Ալավերդյանի «Շրջանակված արձակ» (Frame Story) հասկացությունը և նրա դրսևորումները ժամանակակից հայ արձակում (1985- 2020 թթ.)» ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը նվիրված է XX-XXI դարերի արձակում լայնորեն կիրառվող և գրականագիտության մեջ մեկնաբանվող երևույթներից մեկին՝ այսպես կոչված «շրջանակված արձակի» հնարին, որը հետմոդեռնիստական գրական մտածողության և գաղափարաբանության արգասիքն է աշխարհի մասնատված և ֆրագմենտային ընկալման համատեքստում: Առաջին գլխում, որը վերնագրված է ««Շրջանակված արձակ» հասկացությունը գրականության տեսության և պատմության համատեքստում», ատենախոսը ներկայացնում է վերջին տասնամյակներին հայ և օտարալեզու գրականագիտական աշխատություններում այդ հասկացության տարաբնույթ ընկալումները, անդրադառնում մոտեցումների, դասակարգումների և եզրութաբանության տարբերություններին, գրական երկերում «շրջանակված արձակի» ամենատարբեր դրսևորումներին՝ սկսած Հին Արևելքի գրականությունից մինչև իտալական Վերածնունդ և եվրոպական նոր գրականություն: Նրա ուշադրության տիրույթում գերմանալեզու, անգլալեզու, ֆրանսալեզու և ռուս գրականագիտության (սկսած ռուս ձևապաշտական դպրոցից՝ Վ. Եկլովսկի, Բ. Տոմաշևսկի և այլք) մեկնաբանություններն են, որոնք հաճախ իրարամերժ են ու հակասող, բայց ամբողջության մեջ տալիս են երևույթի համապարփակ պատկերը, ուրվագծում այն սկզբունքներն ու մեթոդաբանությունը, որոնցով պետք է մոտենալ նման երկերին, վերլուծել և գնահատել իբրև արձակ երկերի ձևավորման հատուկ հնարք: Ատենախոսը հաճախ նաև իր համաձայնությունը կամ անհամաձայնությունն է հայտնում այս կամ այն տեսական մոտեցմանը. այսպես, նրա համար անընդունելի են ներդիր պատումների սահմանների խիստ ընդլայնումը, Յու. Լոտմանի կողմից շրջանակ եզրույթի՝ իբրև հավասարապես նաև արտատեքստային երևույթի մեկնաբանումը: Նա առավել ընդունելի է համարում Ժերար Ժենետի տեսական հիմնավորումները՝ միևնույն

Ժամանակ ընդգծելով, որ «շրջանակված արձակի հարցը չունի միանշանակ լուծում: Մինչ օրս չկա դասակարգման քիչ թե շատ ամբողջական տեսություն, որը ներառի նրա բոլոր էական հատկանիշները» (էջ 35):

Երկրորդ գլխում («Շրջանակված արձակն ու հայկական պոստմոդերնիստական արձակը») ատենախոսը քննում է հասարակական, քաղաքական և ազգային այն նախադրյալները, որոնք հիմք են դարձել XX դարավերջին հայ արձակի միանգամայն նոր որակի ձևավորման ու զարգացման համար՝ հրաժարվելով մեծ պատումներից: Եվ այդ հրաժարումը վերաբերում էր ոչ այնքան գրական երկերի ծավալին, որքան աշխարհի լայնամասշտաբ ընկալման հայեցակարգից հեռանալուն: Դասական վեպի ժանրին փոխարինելու են գալիս կոլաժային, ֆրագմենտար, տրոհված պատումները, որոնք մեկ երկի և գաղափարական ընդհանուր հյուսվածքի մեջ միավորելու համար գրողները որոնում են տարաբնույթ ձևեր ու միջոցներ՝ մեծ չափով օգտվելով նաև պատումի շրջանակման ամենատարբեր հնարներից:

Ներկայացնելով երկու դարերի սահմանագծին հայ գրականության մեջ (ոչ միայն արձակում, այլև քնարերգության մեջ և դրամատուրգիայում) տեղի ունեցող փոփոխությունների ընդհանուր տրամաբանությունը՝ ատենախոսն անցնում է կոնկրետ երկերի կառուցվածքային վերլուծությանը՝ դրանք ներկայացնելով երրորդ՝ «Շրջանակված արձակը և ինքնության փնտրտուքը՝ անհատական ու հավաքական մակարդակներում» գլխում, որը ատենախոսության ամենածավալուն հատվածն է և բաղկացած է ինը ենթագլուխներից: Այստեղ քննության նյութ են դարձել իրենց բնույթով տարբեր բավական շատ գործեր, որոնք արտացոլում են ժամանակաշրջանի հայ մարդու անհատական, հասարակական և ազգային տագնապները, անձնական և հավաքական ինքնության որոնումները, ներանձնային ու սոցիալական բախումները: Ատենախոսն այդ երկերը քննության է ենթարկում ամենատարբեր դիտանկյուններից՝ վեր հանելով ինչպես միջտեքստային տարաբնույթ շերտեր, այնպես էլ շրջանակման ինքնատիպ եղանակներ, որոնք բխում են տվյալ երկի կառուցվածքային և բովանդակային առանձնահատկություններից:

Ուսումնասիրվող երկերը, իհարկե, իրենց գնահատականներն են գտել արդի հայ քննադատության մեջ, դարձել տարաբնույթ մեկնաբանությունների առիթ, վերլուծվել

տարբեր մեթոդներով ու գաղափարական դիրքորոշումներով: Ատենախոսը փորձում է միմյանցից տարբեր այդ գործերի մեջ տեսնել տրամաբանական որոշակի ընդհանրություններ՝ կապված պատումի շրջանակման, ներդիր պատմությունների առատության, դիպաշարերի ֆրագմենտային բնույթի հետ: Աշխատանքի հատկապես հաջողված հատվածներն են, մեր համոզմամբ, Լ. Խեչոյանի «Միերի դռան գիրքը» և Վ. Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպերի կառուցվածքային տարրերին և ընդհանուր գաղափարական քննությանը նվիրված հատվածները, որտեղ ատենախոսը կիրառում է նորագույն մոտեցումներ և մեթոդաբանություն: Մասնավորապես, Լինդա Հատչոնի պատմագրական մետահորինվածքի տեսությունը, որը շատ առումներով լույս է սփռում արդի պատմական երկերի բնույթի ու խնդիրների վրա, դարձել է Վ. Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպի քննության հիմնական մեթոդաբանությունը: Ի դեպ, այս ատենախոսությունից միանգամայն անկախ՝ Վ. Գրիգորյանի երկերի քննությանը նման մոտեցում է ցուցաբերել նաև Հասմիկ Հակոբյանը՝ նույն եզրույթը թարգմանաբար ներկայացնելով մի փոքր այլ կերպ՝ *պատմագրական մետագեղարվեստականություն* (տե՛ս Հ. Հակոբյան, «Միջտեքստայնությունը և պատմագրական մետագեղարվեստականությունը Վահագն Գրիգորյանի արձակում», Ե., Էդիթ Պրինտ, 2025):

Կարելի է պնդել, որ ատենախոսը լավագույնս տիրապետում է արդի հայ արձակում պոստմոդեռնիզմի սկզբունքներին, դրանցում առկա հիմնական միտումներին, որոնց հիման վրա էլ դասակարգել է այդ երկերը՝ հիմք ընդունելով գաղափարական և պատկերային-խորհրդանշական մի շարք ընդհանրություններ:

Այնուհանդերձ, աշխատանքի վերաբերյալ ունենք մի շարք դիտողություններ, որոնք, հույս ունենք, ատենախոսը հաշվի կառնի աշխատանքը հրատարակելիս կամ այս թեմային վերաբերող հետագա ուսումնասիրություններում:

1. Նախ, աշխատանքի երրորդ գլուխը անհամաչափորեն մեծ է մյուս երկուսից: Մեր կարծիքով՝ կարելի էր այն բաժանել երկու գլուխների և 3.2-ը («Շրջանակման հնարը՝ հայոց ազգային ինքնության որոնման միջոց») առանձնացնել իբրև ինքնուրույն գլուխ: Բայց դա ընդամենը տեխնիկական խնդիր է և կապված չէ աշխատանքի բովանդակային կողմի հետ:

2. Առավել լուրջ դիտողությունների շարքում կարելի է նշել հետևյալը. ատենախոսն իր դիտարկած երկերը հաճախ վերապատմում է այուժետային մանրամասներով,

ներկայացնում կերպարներին, նրանց գործողությունների շարժառիթները, իսկ շրջանակման ձևերի բացահայտումը կարծես մղվում է երկրորդ պլան (տե՛ս էջ 69-70, 78, 94-96, 105-106 և այլն):

3. Մեզ համար մի փոքր վիճելի և արհեստական են թվում «շրջանակված արձակ երկ», առավել ևս՝ «շրջանակված արձակի ժանր» եզրույթները: Եթե Վերածննդի գրականության մեջ շրջանակն իրոք ժանրային որոշակիություն ուներ՝ ձևավորելով նովելների, գվարձալի և ուսուցողական պատմությունների շարք, ապա ատենախոսի դիտարկած երկերում շրջանակը ստեղծագործության կառուցման հիմնական և առանցքային միջոցը չէ. այն պարզապես հանդես է գալիս իբրև օժանդակ հնար (ընդ որում՝ տարբեր երկերում տարբեր չափով ու եղանակով) պատումի կտրատվածության, դրանում առկա բազմաթիվ միջտեքստային շերտերի կապակցման համար: Ավելին, ատենախոսի կողմից դիտարկված երկերի մի զգալի մասում ըստ էության մենք գործ ունենք ոչ այնքան (կամ ոչ միայն) շրջանակման հնարի, որքան միջտեքստայնության տարաբնույթ դրսևորումների, տեքստի մեջ հանդես եկող ներդիր տեքստերի հետ, որոնց առկայությունն արդեն իսկ ենթադրում է միավորման ինչ-որ եղանակ, որը կարելի է նաև կոչել «շրջանակ»: Սա է պատճառը, որ ատենախոսության մեջ հաճախ ճշգրտված չեն միջտեքստայնության, շրջանակի և ներդիր տեքստերի սահմանները (տե՛ս էջ 148-149, 172 և այլն): Ի վերջո, նույն երևույթը կարելի է մի դեպքում համարել ներդիր, մեկ այլ դեպքում՝ շրջանակ. տարբերությունը դրանց առաջնային կամ երկրորդական գործառույթների մեջ է: Մեր կարծիքով ճիշտ կլիներ շեշտադրել ոչ այնքան «շրջանակված արձակ» եզրույթը, որքան մեկնաբանել շրջանակման հնարը՝ իբրև պոստմոդեռն իրականության, անկախության շրջանի հայ կյանքի խնդիրների արտացոլման յուրօրինակ միջոց: Հանուն արդարության, սակայն, պետք է նշել, որ ատենախոսը բազմիցս շեշտադրում է այդ հանգամանքը՝ խոսելով շրջանակման հնարի մասին, շրջանակի՝ իբրև տեխնիկական միջոցի մասին: Այդ համոզումը տեսնում ենք նաև եզրակացություններում (տե՛ս եզրակացություն 1, էջ 186, եզրակացություն 6, էջ 187), սակայն առավել ցանկալի կլիներ, որ այն ընկներ բուն աշխատանքի հիմքում և դառնար նրա գլխավոր ելակետը:

4. Այդ նույն համատեքստում վիճելի է նաև այն պնդումը, որ պատմության և գրականության միջև երկխոսությունը «անխուսափելիորեն հանգեցնում է նրան, որ

պատմագրական մետահորինվածքային բոլոր երկերը դառնան շրջանակված արձակ՝ շնորհիվ բազմաթիվ դիտանկյունների ու պատմողների, ...միջտեքստային առատ ներդիրների, դրանց պարողիկ քննադատության» (էջ 159): Պատմագրական ժամանակակից երկերն իբրև շրջանակված արձակի պարտադիր դրսևորումներ դիտելու նման միտումն ինքնին աղքատացնում և համահարթեցնում է միանգամայն տարբեր երկերի քննությունը:

5. Հակասական է նաև ատենախոսության հենց առաջին եզրակացության այն պնդումը, որ ծագման պահից ցայսօր շրջանակված արձակը պահպանել է իր հիմնական բովանդակությունն ու «գեղարվեստական պատկերի կառուցման հիմնական սկզբունքները, կառուցվածքային-կոմպոզիցիոն առանցքային հատկանիշները» (տե՛ս էջ 186), մանավանդ որ ատենախոսությունն ամբողջովին նվիրված է շրջանակման նորագույն ձևերին ու եղանակներին՝ իրենց կառուցվածքով, պատկերաստեղծման սկզբունքներով և այլն:

6. Մեզ համար համոզիչ չէ նաև Գ. Խանջյանի «Հիվանդանոց» վեպի՝ իբրև շրջանակված արձակի վերլուծությունը, առավել ևս համոզիչ չէ վեպի երեք տեսրերի՝ հորիզոնական դասավորությամբ պատում-շրջանակներ լինելու վերաբերյալ պնդումը (տե՛ս էջ 85): Մեր կարծիքով այս դեպքում նույնպես միջտեքստային հղումներն ու շրջանակ հասկացությունը լիովին տարրորշված չեն (տե՛ս էջ 85, 100):

7. Շրջանակը դիտարկելով իբրև գեղարվեստական երկի կառուցման հնար՝ կարելի էր թերևս աշխատանքի գլուխների բաժանել ոչ թե ըստ գաղափարական և գոյաբանական խնդիրների արտացոլման ու որոնման ձևերի, այլ ըստ շրջանակման եղանակների ու միջոցների՝ ստեղծելով տիպաբանական (և ոչ գաղափարական) որոշակի կապ տարբեր երկերի միջև:

Այնուհանդերձ, նշված դիտողությունները չեն ստվերում կատարված մեծ աշխատանքը: Ատենախոսն աշխատանքի վերջում գետեղել է բավական ծավալուն բառարան, որն ընթերցողին հնարավորություն է տալիս կողմնորոշվելու հաճախ նոր եզրույթների տարածքում, կցված են հավելվածներ, որտեղ ներկայացված են քննվող երկերի կառուցվածքային վերլուծության արդյունքները: Եզրակացությունները բխում են ատենախոսության մեջ կատարված վերլուծություններից: Օգտագործված գրականության ցանկը շատ հարուստ է, արդիական և համապատասխանում է ընդգրկված բնագրային և տեսական նյութին:



Աշխատանքի ձևավորումը լիովին համապատասխանում է թեկնածուական  
ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Շարադրանքը գիտական է, լեզուն՝  
տրամաբանական և հարթ, տեխնիկական ապարատը՝ կանոնավոր և լիարժեք: Տպագրված  
հոդվածները և սեղմագիրը արտացոլում են ատենախոսության հիմնադրույթները:

Սունա Ալավերդյանը լիովին արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների  
թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝

*Սեդր*

Աշխեն Զրբաշյան

բան. գիտ. թեկնածու, դոցենտ

15.12. 2025

*Պատգարա ԵՏ.*

*ԵՂԳ ԶԻԿԱԿԱՆ ԲԱՐԵՐՈՂԱՅ*

*ՍԵՐ Լ. ԶՈՒԿԱՆԵՆ ԿԵՐԱՆ*



*Մեղան*  
*2*